ՀՀ Լոռու մարզի «Ալավերդի համայնքի Ճոճկանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ հոգեբանի/0.5հաստիքային միավոր/ թափուր հաստիքի համար:
Հոգեբանի հաստիքի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը,ով ունի բարձրագույն մասնագիտական կրթություն կամ ունենա միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և հատուկ դասընթացի միջոցով(այսուհետ՝մոդուլ) ձեռք բերած նախադպրոցական մանկավարժության հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 20 կրեդիտ:
Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
Մրցույթն անց է կացվելու 2026 թվականի հոկտեմբերի 2-ին, ժամը 14:00-ին, <<Ալավերդի համայնքի Ճոճկանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում(հասցե՝5-րդ փողոց շենք 12):
Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել www.alaverdi.am,www.lori.mtad.am կայքերում:
Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:
Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/files/files/2024-10-23/cabaf0475d7f79ebda1d3b036d05e5d0.pdf :
Տեղեկությունների համար կարող եք զանգահարել +37498088618 հեռախոսահամարով:
Հասցե՝ Ալավերդի համայնքի Ճոճկան բնակավայր,6-րդ փողոց,շենք 12
Հեռ..՝ +37498088618
Էլ. փոստ՝ saten.m.v@gmail.com